

ԱՐԳԵԼԱՓՈՎԵԱԼ Ս. ԳԱՆԹԱՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Ա. ՏԵՏԷԵԱՆԻ

Այգային լրատուական գործակալությունը կը հաղորդէ, որ Իսրայէլի մէջ արգելափակուած Կիբանացի Սամիր Գանթարի երեսփոխան Աբրահամ Տետէանի յղուած նամակով մը բարձր կը գնահատէ Լիբանանի հիմնահարցին՝ Հարաւի համար անոր տարած աշխատանքները:

«Անիկա անակնկալ մը չէր՝ նկատի առած ձեր հայկական ծագումը. դուք 1915ին ենթարկուեցաք բնաջնջումի անէնէն ահաւոր փորձին, եւ այս իրողութիւնն է, որ ձեր նման յարգելի մարդիկ կը դարձնէ իսրայէլացի ու պատրաստակամ՝ ամէն բան նուիրելու բունագրաւուին ու անարդարութեան դէմ պայքարին»:

Կ'ըսէ Գանթար իր նամակին մէջ: Ան կ'ողջունէ երեսփոխան Տետէանի «այգային արմատները» եւ անկեղծ հայրենասիրութիւնը. նաեւ բարձր կը գնահատէ «արաբ-հայկական բարեկամութիւնը, առանց մոռնալու, որ 1915ին հայերը հայածողը հայածած է նաեւ արաբ ժողովուրդը, իսկ այսօր արաբները հարուածող թշնամին նաեւ կը հարուածէ Երուսաղէմի հայկական արքայալիրը, եւ չի թողատրեր, որ հայոց 1915ի ողբերգութիւնը ճանչցուի իբրեւ ցեղասպանութիւն. որպէս Ք. Աշխարհամարտին հրեաներու ողբերգութիւնը մնայ անարկութեան գուր շարժող միակ հարցը»:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԿՈՒՄԲԵՐԸ ԳՈՒՄԱՐԵՑԻՆ ՄԻԱՑԵԱԼ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԸ

Խորհրդարանական յանձնախումբերը երկէ գումարեցին նախարարութիւններ եւ պետական խորհուրդներ միացնելու օրինագծի քննարկումին յատկացուած իրենց երկրորդ միացեալ նիստը, գլխավորութեամբ խորհրդարանի նախագահ Նեպիտ Պրորիտի: Կառավարութիւնը ներկայացուցին փոխ վարչապետ եւ ներքին գործոց նախարար Միշէլ Մըր, նախարարներ՝ Մոնա-մէտ Եուսէֆ Պալտուն, Սիւլվան Թրապանի, Նասիբ Սայիտի, Դաֆի Զապիթը եւ Միշէլ Մուսա:

Նիստը մէկ առ մէկ քննարկեց օրինագծի Ա. գլուխին յօդուածները եւ կարգ մը բարեփոխումներ կատարելէ ետք որդեգրեց գայն: Բարեփոխումներէն ետք նախարարութիւններուն թիւը 21ի բարձրացաւ (կառավարութեան յղած օրինագիծը 19) նախարարութիւն կ'առաջադրէր:

Ժողովը ջնջեց երիտասարդութեան եւ մարմնամարզի հարցերու յատուկ եւ առանձին նախարարութիւն մը ստեղծելու կառավարութեան տարբերակի յօդուածը, եւ պահեց կրթութեան նախարարութեան կցուած համապատասխան վարչութիւնը: Ժողովը նաեւ վերանջատեց արհեստից եւ բէքնիք ուսման նախարարութիւնը:

Երեսփոխանները նաեւ որոշեցին առանձին նախարարութիւն պահել ճարտարարուեստի նախարարութիւնը, որ կառավարութեան նախագծին մէջ վերամիացուած էր տնտեսութեան եւ առևտուրի նախարարութեան:

ՇԷՅՆ ԸԱՍԱՆ ՆԱՍՐԱԼԼԱ ԱՅՅԵԼԵՑ ԿԱՐՉԱՊԵՏ ԸՆՍԻ

Վարչապետ Սեյիմ Հրսերէկ ընդունեց Հրգայալա-յի ընդհանուր բարոյագործչէն Հասան Նասրալլան: Հանդիպումին ընթացքին Նասրալլայի «Քուրան» օրինակ մը նուիրեց ինչ ետք, Հրս ստատեց, որ Լիբանանի մեծ իրագործումը՝ իսրայէլեան բրունագրաւուէն հայրենի հողին ազատագրումը կը պարտինք զիմադրութեան հերոսական ուժերուն եւ Լիբանանի հպարտ ժողովուրդին անոր շուրջ համախմբուելուն, ազգային միասնութեան հրաշալի մէկ արտայայտութեամբ:



Վարչապետ Հրս կը յանձնէ Տուրքը:

«Դիմադրութեան ղեկավար շէյն Հասան Նասրալլան ընդունելով կը հաստատեմ, թէ Լիբանանի մարտը ժողովուրդը բարձր կը գնահատէ զիմադրութեան պատմական դերակատարութիւնը ու գոհութիւնները», ըսաւ վարչապետը: Ան աւելցուց: «Այս պատուաբեր հանգրուանին Լիբանան փաստեց, որ անարդարութեան ու յարձակումներուն դէմ հզօրագոյն գնչք հաւատարմորէ մարդն է, որ գինեւծէ կ'զոհողութեան ոգիով: Արդարեւ, Լիբանան ա՛յս գնչքով է, որ պարտութեան մատնեց այն բանակը, որ անպարտելի կը կարծուէր. ա՛յս գնչքով մեր փոքր երկիրը պարտութեան մատնեց զինուորական արհեստագիտութեան արդիական գնչքերը»:

Վարչապետը նկատել տուաւ, որ այս յարգանքները նաեւ բոլոր արարներուն յարգանքն է, եւ այս մեծ իրագործումը իր անդրադարձները պիտի ունենայ միջին արեւելեան տագնապի լուծման գործընթացի տարբեր հանգրուաններուն եւ շրջանի տարբեր կողմերուն միջեւ յարաբերութեանց ապագայ ձեւաւորման վրայ: Շէյն Նասրալլայ յայտարարեց, որ այս այցելու-

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԳԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՊՈՅՔՈՒԹԻ ԵՆԹԱՐԿԵՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԿՈՒՄԲԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Աշխատանքային ընդհանուր համադաշնակցութեան նախագահ Էլիաս Ապու Ռըպք երկէ հանդիպում մը ունեցաւ աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Միշէլ Մուսայի հետ. որմէ ետք ան յայտարարեց, որ համադաշնակցութիւնը տնտեսական եւ ընկերային հարցերու յանձնարումները ժողովներուն մէկ ամիս մասնակցելէ ետք որոշեց պայքարի ենթարկել պահանջ. որովհետեւ յանձնարումներին միւս կողմէրը՝ պետութիւնն ու գործատերերը. լուրջ աշխատանք չեն տանիր լուծելու հարցերը:

Պայքարի որոշումին հետարձ կատարելու եւ ժողովներուն մասնակցելու համար համադաշնակցութիւնը ներկայացուցած է հետեւեալ նախապայմանները. նախ՝ պետութեան սակը վերադարձնել տիպարի նախօրէակի համեմատութեան, ապա յաջորդապէս ժողովներ գումարել եւ լուրջ աշխատանք տանել՝ լուծելու տնտեսական եւ ընկերային հարցերը:

ԻՍՐԱՅԷԼԱՅԻՔ ԿՐԱԿ ԲԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Իսրայէլեան ուժեր երկէ կրակ բացին Քֆարշուլա Թուսայէթ Արամ Սրմաքա շրջանին մէջ գտնուող լրագրողներու վրայ: Անոնք երկէ հեռացան Քֆարշուլա յատկապէս Պասթրա տանող ճամբէն (8 քմ.), բայց կը պահուին շրջանի վրայ հսկող ու Լիբանանի սահմաններէն ներս գտնուող Թուսայէթ Արամի եւ Թուսայէթ Սրմաքայի իրենց դիրքերը:

ՊԱՂԵՍԻՆՅԻՔ ՄԵՐԺԵՑԻՆ...

Պաղեստինցիները նուաճում արձանագրած պիտի ըլլայ, եթէ բնակեցման վայրերուն 80 առ հարիւր Իսրայէլի հակակշիռն ենթակայ մնայ: Պաղեստինցիները կը պահանջեն, որ իրենց հողերուն վրայ կառուցուած բնակեցման 145 վայրերը քանդուին:

Միւս կողմէ, ՊԱԿի պաշտօնատարներէն՝ Յարուք Քատունի երկէ պուշացուց Իսրայէլը, դիմելով տարվ, որ ան իսրայէլցիներին ընդդէմ զաղուրտեան համաձայնագրի մէջ, եթէ լաւեցեալ ուղացումի ենթարկէ Այսրյորդանանը պարսկ լու երրորդ հանգրուանը:

Քատունի. որ նաեւ ստանձնած է պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարարութիւնը, ըսաւ, որ Պարսք ժամաւաճառութեամբ պէտք չէ վրաղի: Ան աւելցուց, որ Իսրայէլ պէտք է ընդունի գրաւուած բոլոր տարածքները վերադարձնելու պահանջը, որովհետեւ առիկա իր պարտաւորութիւնն է իսրայէլութեան գործընթացին հանդէպ: Քատունի ըսաւ նաեւ, որ պաղեստինցիները վիշու միտի չկատարեն եւ հաստատ պիտի մնան իրենց պահանջներուն վրայ:

թիւնը Հարաւի ազատագրութեան շնորհաւորութեամբ համար է, իսկ այս պատմական յարաբերութիւնները, ըսաւ շէյն Նասրալլայ եւ աւելցուց: «Այս առնչութեամբ զիմադրութեան ու պետութեան կեցուածքները մէկ են. կատարուած իրողութիւնը պարտադրելու համար Լիբանանի վրայ ամբարկեան եւ արեւմտեան ի գործ դրուած ճնշումներուն զիմաց պատրաստ ենք առնելու ամէն քայլ, որ կը գործադրեն Լիբանանի կեցուածքը»:

Նասրալլայ յայտնեց, թէ վարչապետն ինչո՞ւ է, որ նախարարութիւններն ու պետական վարչութիւնները «Համբերատար» ըլլան Հարաւի բնակչութեան հանդէպ, եւ կարելի եղած չափով արագացնեն այդ շրջաններու անմիջական կարիքներու ապահովումը:

Մեքք տակաւին կը սպասենք այս ուղղութեամբ լուրջ քայլերուն: Եթէ նկատենք, որ հարցերը լուրջ չեն դարձնուիր եւ ժամապահանքներն տեղի կ'ունենայ, այն ստան Լիբանանի միակ ընտրանքը պիտի ըլլայ այն,

Մեքք տակաւին կը սպասենք այս ուղղութեամբ լուրջ քայլերուն: Եթէ նկատենք, որ հարցերը լուրջ չեն դարձնուիր եւ ժամապահանքներն տեղի կ'ունենայ, այն ստան Լիբանանի միակ ընտրանքը պիտի ըլլայ այն,

Լ. Օ. ԽԱԶԻ ԿԱԶԴՈՒՐՄԱՆ ԿԱՅԱՆ

ԼՕԽԻ Երջանային Վարչութեան Ընկերային Յանձնախումբը. ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կազմակերպած է Կազդուրման կայան, 14 Օգոստոսէն մինչեւ 4 Սեպտեմբեր 2000. Այնուհետեւ մէջ: Կազդուրման կայանի արձանագրութիւնները տեղի պիտի ունենան 4, 5 եւ 6 Յուլիս 2000. Ա. Պուլուրբեան Ընկերաբժշկական կեդրոնին մէջ. 3րդ յարկ:

ՀԱՅ ԱԻՏՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈՒԷՃ ԴԻՊՐՈՄԻ Բատերախումբը կը ներկայացնէ

ԱԼ ՍԱՐՈՒՅԱՆԻ «ՄԵՆՔ ՀԱՅԵՐԸՆ ԶԵՆՔ ԳԻՏԵՐ» Երգիծախաղ սփիւռքահայ բարբերէն (3 արար) Բեմադրութեամբ՝ ՏԻԿԻՆ ԿԱՐԻՆԷ ԱՃԵՄԵԱՆԻ Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 30 Յունիս 2000, երեկոյեան ժամը 8:00ին. Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ հանդիսասրահին մէջ: ՀՐԱԻԷՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հեռ. 01-261115
1.- 2000-2001 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած է յարկաւորութիւնը, 26 Յունիսին եւ կը շարունակուի մինչեւ Ուրբաթ, 19 Յունիս, ամէն օր ժամը 9:00էն 12:00:
2.- Կրթական նոր համակարգին համապատասխան, 2000-2001 տարեշրջանին վարժարանի նախակրթարանի բաժինը պիտի ունենայ նաեւ վեցերորդ դասարան:
3.- Մանկամտուրի բաժինը կ'ընդունուի մէկ տարեկան փոքրիկները, պայմանաւ որ կարենան քայլել:
4.- Երբեք երկրորդ աստիճանով եւ բոլոր շրջաններուն համար:
ՏՆՍՐԷՆՈՒԹԻՒՆ

ՄՍԱՅԱՆՔ

● HERALDING OF THE ARMENIAN GENOCIDE
Reports In The Halifax Herald
1894-1922
Խմբագիր՝ Ք. Ա. Ք. Ի. Ա. ՄԻՆԱՍՔԵԼԻ
Հրատարակութիւն՝ A R M E N I A N C U L T U R A L ASSOCIATION OF THE ATLANTIC PROVINCES

ԲԱՍՏԱԻՈՐՈՒՄԾ

Տեր եւ տիկին Կարապետ եւ Մարուբա Զօրէքեան բախտաւորուած են՝ աղջիկ գաւակով մը՝ ԼՈՐԻԿ - ՓԱԹԻԼ
Պէյրուք. 28 Յունիս 2000

ԾԱՆՈՒ ԿԱՍ ՎԱՐՁՈՒ 3ԱՐԿԱԲԱԺԻՆ

● Պուրե Զամուտ. Մարաշ քաղ. 3 սենեակ: Հեռ. 03-381229:

ՎԱՐՁՈՒ Է

● Յարկաբաժին մը, Պիքֆայալի մէջ, 3 սենեակ, հիւրասրահ, հաշարահ, սպասուելի սենեակ եւ պարտեզ: Հեռ. 03-694929:
ԿՈՒԶՈՒՆ
● SEMERJIAN OPTIC
համար երիտասարդ եւ երիտասարդուկի պաշտօնեաներ: Իմիջին անձամբ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Էֆրոն Սարգիսեան եւ գաւակը՝ Վիգէն Տէր եւ տիկին Վաչէ Սարգիսեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Հայկ Սարգիսեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Վարդան Սարգիսեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Արգայր Մանուկեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Տիրան Աւագեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Միսաք Միսիրեան եւ գաւակուէք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

ԿԱՐՕ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Միացեալ Նահանգներու (Վիրճինիա) մէջ, Շարաթ, 24 Յունիս 2000, երեկոյեան ժամը 8:30ին:
● Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 30 Յունիս 2000, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Դամասկոսի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ:
● Ներկայս ընդունելի իբրեւ մահազոյ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Եղեկ Ինճեան եւ գաւակը՝ Բաֆֆի Տէր եւ տիկին Կարպիս Ինճեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Զորայի Ինճեան եւ գաւակուէք Տիկին Արաքսի Մեքքեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Արրահմ Ինճեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Արրահմ Ինճեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Սեպուհ Ինճեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Գօգօ Քիլիճեան եւ գաւակուէք Տէր եւ տիկին Շահէ Պալապանեան եւ գաւակը Գրճալեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՍԻՐԱՆՈՒՇ ԻՆՃԷԱՆԻ

(ՄԵՆԱՎ՝ ԳՐՃԱԼԵԱՆ, Այնթապ, 1912ին)

մահը, որ պատահեցաւ Զորեքարթի, 28 Յունիս 2000, կէսօրէ ետք ժամը 4:00ին:
Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 29 Յունիս, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:
● Ներկայս ընդունելի իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին գաւակը՝ Կարպիս Ինճեանի բնակարանը, Տահր Էլ Սոււն, Ֆարես Լապալի շէնք, Ա. յարկ, Ուրբաթ 30 Յունիս, Շարաթ 1 եւ Կիրակի 2 Յունիսին:

ՌԻԱՇԻՆԿԹԸՆ Կ'ԱՇԽԱՏԻ, ՈՐ ԹԵՒ ԱԻԻ 3ԵՏՍ ԿՈՉԵ ՉԻՆԱՍԱՆԻ ԶԵՆՔ ԾԱԽԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Իսրայելի Չորեքշաբթի օր լայտնեց, որ լուրջամբ ու առանց աղմուկի կը փորձէ լուծել Ռաշինկ-թընի հետ վեճ մը, որ կ'առնչուի Չինաստանի վաճառուէլիք ռատարներու հարցին:

Վարչապետ Էհուտ Պարաք, որ կ'ուզէ խուսափիլ ամերիկեան Բոնկրէսին հետ անկատուէ մը, լայտնեց, որ ամերիկացիներուն հետ խորհրդակցութիւնները կը շարունակին ինչ հարցը լուծելու լուրջ միջոցները գտնելու համար: Պարաք մտահոգ է, որ Չինաստանի վեճը վաճառելու ծրագիրը պատճառ դառնայ, որ Բոնկրէսը կրճատէ Իսրայելի յատկացում օժանդակութիւնը: Ներկայացուցիչներու Տան յատկացումներու յանձնախումբը Երեքշաբթի օր վալի դարձուցած էր, որ պատրաստ է կրճատուի որոշումը տալու, որովհետեւ ռատարներու վաճառքը առաւելութիւններ պիտի տայ Չինաստանի թայուանեան եւ ամերիկեան օդանւերուն դիմաց, տագնապի մը պարագային: Յատկացումներու յանձնախումբը պահանջեց, որ Իսրայել չ'ընջէ Չինաստանի վեճը ծախելու ծրագիրը, յատկապէս «Ֆալքըն» տիպի ռատարներ:

ԽԱԹԵՄԻ ԴԱՐՉԵԱԼ Կ'ԱՐՏԱՅԱՅՏՈՒԻ Ի ՆՊԱՍՏ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒ ԻՐԱԻՈՒՆՔԻՆ

ԹԵՂԸՆ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի դատապարտեց հաւաքական փակումը անկախ մամուլին: Պահպանողական ատենանքեր Ապրիլէն ի վեր փակման վճիռներ արձակած են բարեկարգչական արեւելումով 19 օրաթերթերու եւ շաբաթաթերթերու դէմ:

ԻՐԱՆ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ նախագահը ըսած է, թէ որեւէ պետութիւն կամ կառոյց կրճայ բռնի ուժով եւ վախազոր միջոցառումներով անդորրութիւն հաստատել, սակայն այդ անդորրութիւնը երկիրը պիտի հասցընէ գերեզմանային խաղաղութեան մը, որուն բնակիչները զոմպիներ են:

Խաթեմի ըսած է նաեւ, որ երկրի մը կառոյցն ու հաստատութիւնները պահպանելու համար պէտք չ'է բռնաբարել քաղաքացիներուն իրաւունքները, եւ որեւէ միջոցառում պէտք է մնայ օրէնքի սահմաններէն ներս:

ՌՈՒՍԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՄԵՐԺԵՅԻՆ ՓՈՒԹԻՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՕՐԻՆԱԳԻԾԸ

ՄՈՍԿՈՒԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ շրջանային հեղինակաւոր դեկամբրները Չորեքշաբթի օր մերժեցին «անձնասպանութիւն գործեր» (ըստ թերթի մը մէկ արտայայտութեան), դէմ քուէարկեցին Դաշնակցային խորհուրդին մէջ զրեքք իրենց անկախորդ շախագահ Պորիս Ելցինի օրերուն, իրենց շրջաններուն մէջ ամբողջական հակակշիռ ունէին տուրքերու, պիւտ-ձէյն, օրէնքներու ամբողջական, լրատու աղբիւրներու եւ բնական հարստութեանց օգտագործումին վրայ:

Վարչապետ Միխայիլ Քախանով յայտնեց, թէ կառավարութիւնը առիթ ունի բարեկարգումներու գծով նոր ձեւեր ի գործ դնելու:

Ան կը խօսէր կառավարութեան մէկ նիստին, որուն ընթացքին կառավարութիւնը որոշեցրած էր տնտեսական նոր ծրագիրը:

Փոլիսի կառավարութիւնը գումարներ արժանացած է զիտաւորաբար արտասահմանէն, որովհետեւ անիկ կը հետապնդէ տնտեսական օրակարգ մը, որ կ'ընդգրկէ տուրքերու մարզի բարեկարգումը:

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ
ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ
ԸՆԹԱՅԻՄՈՒՄԸ

Վարչապետ Միխայիլ Քախանով յայտնեց, թէ կառավարութիւնը առիթ ունի բարեկարգումներու գծով նոր ձեւեր ի գործ դնելու:

Ան կը խօսէր կառավարութեան մէկ նիստին, որուն ընթացքին կառավարութիւնը որոշեցրած էր տնտեսական նոր ծրագիրը:

Փոլիսի կառավարութիւնը գումարներ արժանացած է զիտաւորաբար արտասահմանէն, որովհետեւ անիկ կը հետապնդէ տնտեսական օրակարգ մը, որ կ'ընդգրկէ տուրքերու մարզի բարեկարգումը:

ՆԱԽՆԻՆ
ԳՈՐԾԱԿԱՆ ՄԸ
ՆԱԽԱՐԱՐ
ՆՇԱՆԱՎՈՒՄԸ

Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գաղտնի սպասարկութեանց նախկին պատասխանատու Վիտալ Թրուպիչով Չորեքշաբթի օր նշանակուած է արտաքին գործոց փոխնախարար, որ պիտի գրադի նախկին խորհրդային հանրապետութեանց վերաբերող հարցերով:

Թրուպիչով արտաքին գաղտնի սպասարկութեանց վարիչի պաշտօնը վարած է 1996էն մինչեւ անցեալ Մայիս, երբ Փոլիսի ընտրութեան ժամանակ հրաժարած է:

Նախագահ Վլատիմիր Փուլիսի ստորագրած է ընտանացային մէջ նշուած է, թէ ան Ա. Պ. Հասարակապետութեան մէջ նախագահին յատուկ ներկայացուցիչը պիտի լինայ:

ԱԼՃԵՐԻԱՅԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԻՍՐԱՅԷԼ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ԹԵՐ ԵՒ ԴԷՄ ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատրէյն Օլպրայթ ողջունեց այժեռիացի լրագրողներու Իսրայելի այցելութիւնը՝ կ'աւանդէ իրական քայլ մը նկատելով:

կա տեղի կ'ունենար այնպիսի պահու մը, երբ պաղեստինցիները կարիքը ունին իրենց արաբ բոլոր եղբայրներուն պօսակցութեան եւ Իսրայելի դէմ որդեգրուած էստիպանտ կեց-ւածքին: Լրագրողներուն այցելութիւնը կը կախուէ արաբական կեցումաձեւը:

Այժերիացի լրագրողները Կիրայի օր հասած էին Իսրայելի՝ ընդառաջելով արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական հրաւերին: Իսրայել կը դրուատէ այժերիացի լրագրողներն ու անոնց յանդուգն որոշումը, մինչ Ալթէ պանոնք դաւաճաններ կը նկատէ, որովհետեւ անոնք կ'այցելեն երկիր մը, որուն հետ կապեր չունին Այժերիա:

Օլպրայթ, որ կը խօսէր Երուսաղէմի մէջ տրուած մամլոյ առու-լիսի մը ընթացքին, ըսաւ, որ կը գնահատէ այժերիացի լրագրողները:

Այժերիացի լրագրողներէն մէկը ըսաւ, որ արաբեկախախտեան կապերը բարելաւելու համար ինչոք առաջադրուած էր պետք է խօսին իրարու հետ: Ան աւելցուց, որ Իսրայելի առեւտրուած մըն էր իրեն համար եւ լուծելու համար այդ մէկը՝ անհրաժեշտ էր այցելել հոն եւ ծանօթանալ անոր ժողովուրդին: Այժերիացի լրագրողը լայտնեց նաեւ, որ Իսրայել եկած է գոհացում տալու մտաւորականի իր հետաքրքրութիւններուն:

Իսրայելեան «Հասարակ» օրաթերթը հաղորդեց, որ այժերիացի լրագրողներու խմբակը պիտի այցելէ նաեւ պաղեստինեան շրջաններ: Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան հարցերու գործակալութիւնը քննադատեց այժերիացիներուն Իսրայել այցելութիւնը, դիտել տալով, որ անի-

ԻՐԱՆԻ ՄԵՋ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՄԲ ԱՍԲԱՍՏԱՆՈՒՄԸ 13 ՉՐԵԱՆԵՐՈՒՆ ԴԷՍ ՎԵՐԱՆԵՐԸ՝ ՀԱՐԱԹ ՕՐ

Իրանի մէջ լրտեսութեամբ ամբաստանուած 13 հրեաներուն դէմ վճիռները պիտի արձակուին Շարաթ օր: Ամբաստանեալներուն պաշտպան փաստաբանները երկ կ'դատապարտեցին վճիռները հրապարակաւ յայտարարելու ծրագիրը՝ գայն ապօրինի նկատելով:

Փաստաբաններու խմբակէն Իսմայիլ Նասերի ըսաւ, որ ամբաստանեալներուն արժանապատուութիւնը վիրաւորուած պիտի ըլլայ, եթէ վճիռները հրապարակաւ յայտարարուին: Ան աւելցուց, որ շարաթներով դաշն-փակ դատապարտութիւն մը կատարելէ ետք դատական իշխանութիւնները կ'ուզեն քաղաքականացնել հարցը: Անոնք կ'ուզեն նաեւ չ'ընդգրկեն զատր վարող դատաւորին անկախութիւնը: Նասերի գիտել տուաւ նաեւ, որ դատարանը իրաւունք չունի վճիռները հանրութեան սեփականութիւնը դարձնելու:

Միւս կողմէ, Բրիտանիոյ մէջ քրիստոնեայ եւ հրեայ կրօնաւորներ կոչ ուղղեցին Իրանի, որ երաշխաւորէ, թէ դատարանը արդար ու անկողմնակալ կեցուածք պիտի որդեգրէ հրեայ ամբաստանեալներուն հանդէպ: Ընտան հաստատուած քրիստոնեաներու եւ հրեաներու խորհուրդը յայտնեց, որ այս գծով նամակ մը ուղարկած է Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի:

Միւս կողմէ, Բրիտանիոյ մէջ քրիստոնեայ եւ հրեայ կրօնաւորներ կոչ ուղղեցին Իրանի, որ երաշխաւորէ, թէ դատարանը արդար ու անկողմնակալ կեցուածք պիտի որդեգրէ հրեայ ամբաստանեալներուն հանդէպ: Ընտան հաստատուած քրիստոնեաներու եւ հրեաներու խորհուրդը յայտնեց, որ այս գծով նամակ մը ուղարկած է Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի:

ԻՐԱՔՅԻ ՄԸ ԿՐԱԿ ԲԱՅԱԻ ՄԱԿԻ ՄԵԿ ԿԵԴՐՈՆԻՆ ՎՐԱՅ

ՊԱՂՏԱՏ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրաքի նկատմամբ հաստատուած պատժամիջոցներուն դէմ բողոքող իրաքցի մը Չորեքշաբթի օր կրակ բացաւ ՄԱԿի կեդրոններէն մէկուն վրայ՝ երկու կոն եւ աւելի քան եօթը վիրաւոր պատճառելով:

Իրաքցի պաշտօնատարներ եւ ՄԱԿի աղբիւրներ լայտնեցին, որ կ'ինքաւ մը մտած է ՖԱՕի շէնքը եւ կրակ բացած է սրահի մը մէջ հաւաքուած մարդոց վրայ, ապա ան բարձրացած է վերի յարկերը, որ եւս փամփուռներու տարափի մը տակ առած է ներկաները: ՖԱՕ լայտնեց, որ վիրաւորներէն չորսը իրաքեան ապահովութեան ուժերուն կը պատկանի. իսկ երեքը՝ ՖԱՕի անձնակազմին: Չոհերէն մէկը իրաքցի մըն է, իսկ երկրորդը՝ սոմալցի: ՖԱՕի աղբիւրները լայտնեցին նաեւ, որ կ'ինքաւ լայտարարած է, թէ կը բողոքէ ՄԱԿի կողմէ հաստատուած պատժամիջոցներուն դէմ:

ՖԱՕի բանբերը լայտնեց, որ կ'ինքաւ երկու ժամուան համար պատանդ պահած է մօտաւորապէս քսոսաւուն պաշտօնէալ: Բանբերը ըսաւ նաեւ, որ գործողութեան դրդապատճառները լայտնի չեն: Բանբերը աւելցուց, որ իրաքեան ոստիկանութիւնը յաջողած է ձերբակալել կին-երկու:

ՖԱՕի բանբերը լայտնեց, որ կ'ինքաւ երկու ժամուան համար պատանդ պահած է մօտաւորապէս քսոսաւուն պաշտօնէալ: Բանբերը ըսաւ նաեւ, որ գործողութեան դրդապատճառները լայտնի չեն: Բանբերը աւելցուց, որ իրաքեան ոստիկանութիւնը յաջողած է ձերբակալել կին-երկու:

ԻՐԱՔՅԻ ԸՆԴՊԻՍՏԻՊՆԵՐ
ԲԱՐԵԿԱՎՄ ԿԸ ՀԱՄԱՐՆԵՆ ԱՎ ԿՈՐԸ

Իրաքցի ընդդիմադիր ղեկավարներ, որոնք աքսորի մէջ կը գտնուին, լայտնեցին, որ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Ալ Կոր իրենց բարեկամն է: Իրաքեան Ալ գայի Բոնկրէսի ղեկավարութեան անդամ Շերիֆ Ալի պըն Հիւսէյն ըսաւ, որ Երկուշաբթի օր հանդիպում մը ունեցած են Կորի հետ եւ այդ հանդիպումին ընթացքին իրաքցի ընդդիմադիրները երաշխաւոր ունեցած են, որ կ'որ-նան անգլա-իսրայէլական բարեկամի թէ:

Ռաշինկթըն պօսակց կը կանգնի ընդդիմադիր ճակատին, որ կ'ուզէ տապալել Սատուս Հիւսէյնի իշխանութիւնը:

**ԼԻԲԱՆԱՆԱՆԱՅ ԱՐՈՒԹԵՍԱԳԷՏՆԵՐՈՒ
ՀԱՄԱՆՄԵՐՈՒՄ**

ՅԻՇԱՏԱԿԻ ՉԵՈՆԱՐԿ

Ամենայն հայոց կաթողիկոս երջանակալիչատակ ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի վախճանումին ատաշին տարելիցին առթիւ

«ՄՏԱԾՈՒՄՆԵՐ» ԵՐՉԸ. հայրապետին եւ ՍԱՀԻԿՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը ներկայացնէ՝
Ճարտ. եւ Հնագէտ ԲԱՅԻԻ ՉԵՐՉԵԱՆ

Երկուշաբթի, 3 Յուլիս 2000, Երեկոյեան ժամը 7:30ին, GARDEN TOWER, Անթիլիաս:

ՀՐԱԻՐ

**ԳՊՐԵՎԱՆՔԻ
ՆՈՐ ՍԱՆԵՐՈՒ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի տեսչութիւնը որպիսութիւն ունի յայտարարելու, որ Գպրեվանքի 71րդ (2000-2001) ուսումնական-կրթական տարեշրջանի արձանագրութիւններն ու մուտքի քննութիւնները տեղի պիտի ունենան յատկապէս 3ին 7 Յուլիս 2000, կաթողիկոսարանին մէջ, Անթիլիաս:

Անոնք որոնք կը փախսքին դպրեվանքի սան դառնայ եւ աւարտած են վեցերորդ դասարանը, պարտին Տեսչութեան ներկայանալ իրենց ծնողքին հետ, բերելով:

Ա.- Նախորդ տարուան վիճակագրոյցին ու վկայականին լուսապատճէնները:

Բ.- Քահանայ հօր եւ դպրոցի տնօրէնութեան կողմէ բարի վարուց վկայագիրները:

Գ.- Բժշկական վկայագիր:

Դ.- Անձնաթուղթի կամ «իւրաք թայտ» ի լուսապատճէնը:


Ե.- Անձնաթուղթի երեք գունատր լուսանկար:

Մուտքի քննութեան ներկայացող թեկնածուին թղթածրարը ամբողջական պէտք է լլկայ:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ

National
Air Conditioners

Clean & Quiet
Add quality to your life!



Satisfying the World's Safety Standards

UL, ISO 9002, U.S.A. International Japan, AENOR, ONEMCO, CE

TUTUNJIAN CORP. S.A.
Exclusive Agents
Tel.: (04)-712129/130

ԵՒՐՈՍԻՈՒԹԵԱՆ ՉԱՓԱՆԵՆԵՐՈՒ ՅԱՐՄԱՐԵԼՈՒ ՀԱՐՅՈՎ

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԷՄ Է ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Թրքական մամուլը եւ յատկապէս «Ռատիքալ» թերթը երկրորդ փամբանակի ի վեր արձագանգ կը հանդիսանան Եւրոպական Միութեան կողմէ պահանջուած «Քուրդականութեան» չափանիշներու յարմարելու գործին մէջ ծագած տարակարծութեանց:

Վարչապետարանի մարդկային իրաւունքները համակարգող Բարձրագոյն խորհուրդը Մայիս ամսուան ընթացքին պատրաստած էր տեղեկագիր մը՝ թուելով ըրողը այն միջոցառումները, որոնց թուրքիա պէտք է դիմէ եւրոպական չափանիշներուն յարմարելու համար՝ գոյացնելով Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան տեսակէտները: Հոն անուղղակիորէն կը յանձնարարուի քրտական ինքնութիւնը ճանչնալ եւ քրտերէնի ուսուցման ու պատկերասփռումներուն արտօնութիւն շնորհել:

Թուրքիոյ Ազգային պահանջութեան խորհուրդը կողմնակից չէ այս վերջին առաջարկներուն, եւ անցեալ շաբթուան վերջաւորութեան հաղորդուեցաւ, թէ տեղեկագրին ջնջուած են այս յանձնարարութիւնները:

Ազգային պահանջութեան խորհուրդի կարծիքը այն է, թէ Թուրքիոյ մէջ փոքրամասնութիւններուն հարցը «միանշանակ չէ» ըստ իրենց կարծիքի: Ազգային պահանջութեան խորհուրդը կը շեշտէ, որ կը չընտելնէ քրտական ինքնութիւնը ճանչնալով կամ քրտերէնի ուսուցման արտօնութիւն տալով՝ անջատողական շարժումները պիտի հրահրուին:

Ազգային պահանջութեան խորհուրդին այս կեցուածքը կը նշանակէ, թէ Թուրքիոյ կրնայ ընթացք տալ եւրոպական չափանիշներուն յարմարելու պահանջներուն: Թրքական մամուլը կը գրէ, թէ Եւրոպական Միութեան այդ չափանիշները «չափազանցուած» են Թուրքիոյ շահերուն դէմ են: Ազգային պահանջութեան խորհուրդին համոզումը այն է, թէ քրտական ինքնութիւնը ճանչնալով կամ քրտերէնի ուսուցման արտօնութիւն տալով՝ անջատողական շարժումները պիտի հրահրուին:

Ուրեմն, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան տեսակէտները փաստօրէն մերժուած են Ազգային պահանջութեան խորհուրդին կողմէ, հակառակ նախարարութեան այն պնդումին, թէ

քրտերէնի ուսուցման դէմ սահմանափակումները հակառակ ազդեցութիւն կ'ունենան եւ կը հրահրեն անջատողական հոսանքները:

«Ռատիքալ» կը գրէ, թէ այսպէսով «քրտերէնի ուսուցման հարցը եւս յետաձգուեցաւ ուրիշ գարնան մը»:

Յունիս 23ին «Ենի Պիլեքըլ» թերթին մէջ բաւական խիստ յողուած մը հրատարակած է հրատարակարի Էթիլն Մահճուլեան, որ առանց բռնաբար ծամծելու կը քննադատէ Ազգային պահանջութեան խորհուրդին տեսակէտները եւ կը պնդէ, թէ անոնք իրապաշտ չեն:

«Սոսլ տպաւորութիւն մը կայ այն մասին, թէ Ազգային պահանջութեան խորհուրդին տեսակէտները միշտ իրատես ու տրամաբանական են: Մինչդեռ այն ճրջմատութիւնները, որոնց վրայ հիմնուած են Ազգային պահանջութեան խորհուրդի տեղեկագիրները, բնաւ կապ չունին առկա մարդկային ու հաւաքական ճշմարտութիւններու հետ, այդ տեղեկագիրները արտօնական են եւրեւեակալական ճրջմատութիւններու վրայ հիմնուած են», կը գրէ Մահճուլեան:

Ան կը նշէ, որ «բոլորը այսպէս յագեցած ենք այն ներքին ու արտաքին թշնամիներէն, որոնք մասին շարունակ կը խօսուի Ազգային պահանջութեան խորհուրդի տեղեկագիրներուն մէջ»:

Մահճուլեան կը յիշեցնէ, թէ քրտարեւել չըջաննեցու ժողովուրդը ներկայիս կը հետեւի նաեւ քրտերէն հաղորդում կատարող երեք օտար պատկերասփիւռային կայաններու եւ հարց կու տը. «Այս պայմաններուն մէջ կարելի է ընդունելու Ազգային պահանջութեան խորհուրդին այն կարծիքը, թէ քրտերէն պատկերասփիւռը պիտի հրահրէ անջատողական շարժումները»:

Արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձէմ Կիրակի օր յայտարարեց, թէ Թուրքիա պէտք է «ինքնիշխման իրաւունքով», եթէ կ'ուզէ կապուի հաստատել եւրոպական համայնքին հետ: Ան աւելցուց, թէ «Եւրոպական համայնքին» չէ այս Ազգային պահանջութեան խորհուրդին եւ արտաքին գործոց նախարարութեան միջեւ, եւ «Երբ նաեւ» համարեց, որ խորհուրդը իր սեփական կարծիքները ունենայ որեւէ հարցի շուրջ:

ԲԱՐԼԻ «ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ»ՈՒ ԱՄԱՎԵՐՋԻ ԸԱՆԴԵՍ

20 Յունիս, կէսօրէ ետք ժամը 5:30ին, ԲԱՐԼԻ հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ՝ Մասնաւոր դասարաններու ամսական հանդէսը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Մասնաւոր դասարաններու ընդհանուր պատասխանատու եւ մանկավարժ հոգեբան Ռիթա Պարմաքարեան: Լէն Գերկանեան քարի գալուստ Պաշտօնով՝ յայտնեց կարգ մը խորհրդածութիւններ՝ ուղղուած ծնողներուն, ամեն շաղորդութիւնը հրաւիրելով իրենց զակիւն յառաջիմութեան եւ հոգեկան հանգստութեան վրայ:

Լկալ գնահատեց զանոնք ծնողական պարտականութեան գիտակցութեան համար, որ իրենց զակիւնները չընթացնէ իրենց ճակատագրին, այլ՝ ճար փնտռեցին, որ ամեն սորվիմ գրել է կարդալ, օր մը ընկերութեան մէջ իրենց տեղը ունենալու համար:

Իր խօսքին ամառուին ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր դասատուներուն, հաստատութեան գնահատման ժամանակներու պատասխանատուներուն եւ անձնակազմին, սնորհակալութեան եւ խնամակալութեան, որոնք միշտ թէ ու թիկունք կանգնած են իրենց, ինչպէս նաեւ՝ ԲԱՐԼԻ բոլոր բարերարներուն:

Ինչ կերպով մանուկները իրարու կը սնանկան եւ իրարմէ կը տարբերին: Եւ՝ դպրոցներու դրոշմները մոռնալ է...

Ընդհանրապէս մանուկները գիտելիքները կ'ընկալեն արագ կերպով եւ կը պահեն իրենց յիշողութեան մէջ: Մակայն կան նաեւ մանուկներ, որոնք այս կամ այն պատճառով համեմատաբար ատելի դանդաղ կ'ընկալեն ու կը սորվին: Ուրեմն յատուկ են նաեւ անոնք որ պրոցն ու ուսումնական ծրագիրը:

ԲԱՐԼԻ Մասնաւոր դասարանները կ'ընդունին դպրոցական յայտնում եւ ուսումնական դժուարութիւններ ունեցող 6էն 16 տարեկան աշակերտներ՝ յետ հոգեբանական եւ մանկավարժական քննութեանց՝ իրաքանջիւր աշակերտ կը հետեւի այն ուսումնական ծրագրին, որ կը յարմարի իր կարողութեան եւ մակարդակին: Կ'ուսուցանուի երեք լեզու՝ հայերէն, անգլերէն, արաբերէն, ինչպէս նաեւ զանազան միջոցով՝ ապահովելով ստալիս, ուսումնական, հոգեկան, ընկերային լաւագոյն զարգացում:

1971էն ի վեր հոս յաճախած են 444 աշակերտներ, որոնց 136ը՝ աղջիկ, իսկ 308ը՝ մանչ:

Թէ է այս տարի ԲԱՐԼԻ իր հումանը չտուաւ, սակայն խոստման չէր ամսական հանդէսը իր ճոխ յայտագրով: Խմբակային արտասանութիւններ՝ հայերէն:

ԳԻՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ

26 Յունիսին Գլորգեան ճեմարանի սրահին մէջ տեղի ունեցաւ 1999-2000 կրթական տարեշրջանի փակման արարողութիւնը, Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի նախագահութեամբ:

Ճեմարանի տեսուչի պաշտօնակատար Բարգէն արեղ-Սարգիսեան նշեց, որ կրթական անցնող տարեշրջանին հոգեւոր բարձրագոյն կրթութիւն կը ստանար 107 ուսանող, որոնցմէ 22ը աւարտեց Նոր յարանը՝ համարելով Ս. Էջմիածնի միաբանութեան շարքերը: Անոնցմէ մաս մը յանձնած է նաեւ սարկաւազութեան քննութիւնները:

Վեհափառ իր գնահատանքը յայտնեց տեսուչութեան եւ դասախօսական կազմին՝ նշելով, որ այսուհետեւ իր աւելի գործնական մասնակցութիւնը պիտի բերէ ճեմարանական կեանքին: Գարեգին Բ կաթողիկոս շրջանաւարտներուն պատգամեց ըրալ ճշմարիտ հոգեւորական եւ իր առաջին իր յոյսն ու աղբ, որուն համար անհրաժեշտ է գիտելիք, գիտակցական հաւատք, աղօթասիրտութիւն եւ գթասիրտութիւն:

Հանդիսութեան ներկայ էր Երուսաղէմի Հայոց պատրիարք Թորոս արք. Մանուկեան: Ան նոյնպէս ողջունեց ճեմարանականները՝ յոյս յայտնելով, որ անոնք հետաժող կ'ըլլան այն հեռուոր նպատակին, որ Հայ եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի ծառայութիւնն է:

ԿԱՌԼԵՆ ԱԳԱՍԵԱՆ ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՕՐԷՆ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ

Լեոնային Ղարաբաղի Գանրապետութեան վարչապետ Անուշահան Ղանիլեանի 26 Յունիսի որոշումով Արցախի Պետական համալսարանի տնօրէն Անուշահան Կառլէն Աղամեան:

Նոյն օրը Լեոնային Ղարաբաղի Գանրապետութեան կառավարութեան նախագահ Արցախի Պետական համալսարանի անձնակազմին ներկայացուց նոր Անուշահան տնօրէնը:

Կ. Աղամեան ծնած է 1934ին, Լեոնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Երեքոյ Գոռաբաղ գիւղը: 1952ին, Ստեփանակերտի մէջ երկրորդական ուսումնական տարիները, ուսումը շարունակած է Մոսկուայի մէջ ՌԵՏԱԿԻՍԻ հարցերու մասնագիտութեամբ:

1957ին գործուղուած է Երեւան, իսկ 1974ին Անուշահան տնօրէն արգիւնաբերութեան փոխ նախարար: Երկար տարիներ աշխատած է «Հայպետստատարտ» վարչութեան մէջ, իսկ 1996ին ի վեր Գայկական Պետական ճարտարագիտական համալսարանի կափաբանութեան ամպիոնի վարիչն էր:

1988ին արժանացած է փրոֆետորի կոչման: Ան հեղինակ է 100է աւելի գիտական աշխատութիւններու: Կ. Աղամեան Ռուսիոյ չափազանցական ակադեմիայի ակադեմիկոս է եւ երկու գիտերու հեղինակ է:



Հանդիսութեան գեղարուեստական յայտագրին տեսարան մը:

արաբերէն, անգլերէն լեզուներով, խմբերգներ, տրամախօսութիւն:

Լէոն արժանացան հանդիսատեսներուն բուն եւ երկարատեւ ծափահարութեան՝ վստահեցնելով, որ իրենց իրենց սորվածները պիտի կիրարկեն կենցաղին մէջ:

Հանդիսութեան ամառուին խօսք տուաւ ԲԱՐԼԻ տնօրէն Կերոզ Կարապոյաճեան: Լէն խօսելով Մասնաւոր դասարաններու դերին ու նշանակութեան մասին՝ անոր համար փոխանցեց օրոտան խորհուրդը: Լկալ արժեւորեց Մասնաւոր դասարաններու դասատուներու տրամաքան աշխատանքը: Լէն բեմ հրաւիրեց ընդհանուր պատասխանատու Ռիթա Պարմաքարեանը, ապա յաջորդաբար՝ Նելլի Էնթիսեանը, Ժաննա Կալանթարեանը, Մարո Զօքլարեանը, Մարալ Տէր Յակոբեանը, Լեոն Բիրիսիւնեանը, համակարգիչի դասատու Խաչակ Մանիսաճեանը եւ անոնց յանձնեց ծաղկեփուռներ:

Լէն հարկ համարեց նաեւ յիշատակել ԲԱՐԼԻ, Լէն Անթոն գործող-խումբ համարող դասատու Արմենակի Աֆարեանին աշխատանքը խոյնդրու է համարելու ուսուցման ծիրին մէջ:

Հանդիսութիւնը փակուեցաւ վեր. Մամուլէ Լկառէկեանին աղօթքով եւ Մեսրոպ քնն. Բերքէգեանի «Պահպանիչ»-ով:

Լկալ ԲԱՐԼԻ շրջափակին մէջ տեղի ունեցաւ հիւրախորհուրդ:

ՌՈՒԶԱՆԵԱ ՌԻԼԻԿԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ 70 ՏԵՂ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ՝ ՍՓԻՒՌԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի պետական բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու մուտքի քննութեան պետական պատուէրի շրջանակներուն մէջ, 70 տեղ տրամադրուած է սփիւռեալային ուսանողներուն:

Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան Սփիւռեալ բաժնի կը հաղորդէ, թէ մուտքի քննութիւններուն առաջնահերթութիւնը պիտի տրուի մանկավարժական, հայագիտական, մշակուցիչ եւ Սփիւռեալ առաջնահերթութիւններէն յետոյ այլ մասնաւորութիւններուն:

Նախարարութեան Սփիւռեալ բաժնի պետ Եւրա Նաւոյեան ըսաւ, թէ Սփիւռեալի դպրոցներու եւ ազգային այլ հաստատութիւններու համար անձնակազմեր պատրաստելու հարցը կարեւոր է Հայաստան - Սփիւռեալ կրթական քաղաքականութեան համար:

Ներկայիս Սփիւռեալի մէջ կան շուրջ 390 մանկավարժ դպրոցներ, որոնց համար հայագիտական մասնագիտացումներով անձնակազմեր կը պատրաստուին գլխաւորաբար Միջին Արեւելքի երկիրներուն մէջ: Մինչ Ամբրիկայի եւ Եւրոպայի դպրոցներու համար նման անձնակազմեր պատրաստելու հարցերը մասնակիորէն միայն կը լուծուին տարբեր երկիրներու հայագիտական ամպիոններուն մէջ, իսկ ԱՊՀ-ի երկիրներուն մէջ գործող հակապետ դպրոցներուն համար նման օգակներու բացակայութեան պատճառով անոնց յոյսը Հայաստանի կրթական համակարգն է:

Նաւոյեան ըսաւ, թէ Սփիւռեալի համար հայագիտական եւ մանկավարժական անձնակազմեր պատրաստելու լուծումներէն ամէնէն հիմնականը սփիւռեալային կրթութեան արդիւններուն պետական պատուէրով ուսանելու կարելիութիւնն է:

Ան աւելցուց, թէ Արցախի պարագային դժուարութիւններ կան: Չուզ պետութիւններուն կրթական նախարարութիւններուն միջեւ կնքուած համաձայնագրով ամէն տարի արցախցի 30 ուսանողներ պետական պատուէրով պիտի ուսանին Հայաստանի պետական համալսարաններուն մէջ:

ԵՃԵԻՏ ԴՊՊՈՒՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԻՈՒԹԵՆԵՆ

Անցեալ շաբթուան ընթացքին կայացած Եւրոպական Սիոութեան գերատեսիլ-ճանի որոշուեցաւ կարգ մը երկիրներ դուրս զգել Սիոութեան եւ Պաշտպանութեան Ինքնուրուս Ուստ կողմէ կազմակերպուած օրնտերի մարմինը: «Մարմարա» կը հաղորդէ, թէ դուրս մնացած երկիրներուն շարքին կը գտնուի նաեւ Լատվիա, հակառակ այն իրողութեան, որ վերոյիշեալ կազմակերպութեան մասին պիտի ունենայ ՕԹԱՍԻ պարտաւորութիւնները:

Անցարդ երկար առեւտրի վեր մտադէր էր Եւրոպական Սիոութեան այս տրամադրութեան: Թուրքիոյ վարչապետ Պիլիլէն ճեմիտ պաշտօնապէս այդ տրամադրութիւնը յայտնեց եւ «անմիտ, անխիղճ եւ անբնական» որակեց այդ որոշումը: Եթէ լիտ լրագրողներուն հարցումներուն պատասխանելով ըսաւ, որ կը դժուարանայ հաւատալու, թէ Եւրոպիայի մէջ կը ընդունուի «այսքան անիմաստ» որոշում մը:

«Չկարծեմ, որ անոնք Թուրքիոյ ՕԹԱՍԻ ուժերը պիտի կարենան իրենց ուզածին պէս գործածել ուսանող մեզի հետ խորհրդակցելու», ըսաւ ճեմիտ:

Եթէ լիտի կարծիքը այն է, որ պէտք է սպասել ու տեսնել, թէ ինչ դիրքորոշում պիտի որդեգրեն Նորվեգիոյ, Լեհաստանի, Գերմանիոյ կամ Իսլանտայի ուսումնական Սիոութի երկիրները, որոնք մտադարձուցնում են Նորվեգիոյ կապուցումը եւ Եւրոպայի կապուցումը: Գերմանիոյ կապուցումը Ինքնուրուս Ուստին: Հաւանական է, որ Թուրքիա անոնց հետ միացնուի ընդդիմութիւն գոյց տալ Եւրոպիային:

ՀԱՄԱԿԱՆՈՒԹԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ
HAMPIG SASSOUNIAN C - 88440
CSP - L.A.C. D -5- 232 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536
USA

ARA TRAVEL IATA
ARMENIAN AIRLINES
SALES AGENT,
ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԵ
ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱԽՈՐԳՆԵՐՈՒՆ,
ՈՐ Կ'ԱՊԱՀՈՎԷ
ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԵՅՐՈՒԹ
ԵՒ ԸԱԼԷՊ - ԵՐԵՒԱՆ - ԸԱԼԷՊ
ARMENIAN AIRLINES ընկերութեան
• օդանավային տնօրէն • օպարացի փոխադրութիւն
ԱՐԱ ԹՐԱՎԵԼ,
Պուրճ Համուտ, Նամակատան շէք,
Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՔՈՒՆ ԶԻԱՍԹԱԾՅՐԵԼ Է ԵՐԿԴԻՍԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Փափխտանի ռազմական առաջնորդ, գորավար Փեթվկյ Մուշառաֆի եւ Ագրոպկճանի նախագահ Հայտար Ալիեւի յայտարարութիւնները՝ Թեւհրանում Յունիսի 9 - 10ին կայացած Տնտեսական Համագործակցութեան կազմակերպութեան վեհաժողովում, վերածուեցին միջազգային աղաղակող գալթեակութեան, գրոււմ է մոսկովեան «Քոմմերսալթ» պարբերականը։

Յիշեցնենք՝ Թեհրանեան հանդիպման ժամանակ գորավար Մուշառաֆը նախագահ Ալիեւին օգնութիւն եւ օժանդակութիւն կը խոստացել յօգուտ Ագրպկճանի լուծելու։ Լեւոնային Ղարաբաղի խնդրուր։ Զգայացուեց հաղորդագրութիւնը բաւկանութիւն կը պատճառել Ագրպկճանի իշխանութիւններին։ նշոււմ կը, թէ Խոսքամպատր ռազմական օգնութիւն է տրամադրելու Պաքուին։ Ի երախտագիտութիւն, Ագրպկճանը խոստանում կը արկակցութիւն Խոյանպատին քաշմիրեան խնդրում։

Առաջինն արձագանգեց Հնդկաստանը։ Տեհիւն բողոքագիր ուղղեց Ագրպկճանի կառավարութեանը։

Քաշմիրի հարցում Փափխտանի եւ Հնդկաստանի միջեւ հակամարտութիւնը պայտօնանաւ Տեհիւի արտաքին քաղաքականութեան ամենատուր եւ ցաւոտ խնդիրն է, եւ օտարերկրեայ ցանկացած միջամտութեան՝ ռազմական թէ քաղաքական, Հնդկաստանը ցաւով եւ վրդովմուռնքով է արձագանգում։ Որ Քաշմիրը Հնդկաստանի համար չափազանց զգալուն խնդիր է, քաջ գիտակցում են նաեւ համաշխարհային ոստիկան Միացեալ Նահանգները։ Մի քանի ամիս առաջ պաշտօնական այցով Հնդկաստան ժամանած նախագահ Պիլի Քլինթոնը, որի ղեկավարած երկիրը Փափխտանի դաշնակիցն է այս շրջանում, հասկանալ տուեց, որ Քաշմիրի հարցում չի պաշտպանի Խոյամպատի պահանջատիրութիւնը եւ պաշտպանում է Հնդկաստանի տարածքային ամբողջականութիւնը։

Պաքում Փափխտանի ղեսպանատուներ չերթել է Ագրպկճանին ռազմական օգնութիւն ցոյց տալու։ Հայտար Ալիեւի հետ Թեհրանում հանդիպման ժամանակ Փափխտանի նախագահի յայտանք պատրաստակամութեան վերաբերեալ մի շարք գանդուածային լրատուամիջոցների հաղորումները։ Իր երկրի կառավարութեան անուռնից ղեսպանատուներ դրանք որակել է «չարաշահութիւն»։ Տարածած մամուլ հաղորդագրութեան մէջ շեշտոււմ էր, որ Թեհրանի հանդիպման ժամանակ Փափխտանի առաջնորդ Մուշառաֆն իր արկակցութիւնն է յայտնել Ագրպկճանի դիրքորոշմանը՝ դարարադեան հակա-

մարտութեան խաղաղ կարգադրում՝ համաձայն ՄԱԿի բանաձեւերի։

Մինչդեռ Ագրպկճանինախագահի աշխատակազմը Մուշառաֆի բառերը չափացանց լուրջ է ընդունել։ Աշխատակազմի միջազգային բաժնի պատասխանատու Նովրուզ Մամետովը (որի վրայ են դրուած Վաֆա Կիլիցատէի պարականութիւնները, ասել է թէ՛՝ արտայայտել պաշտօնական Պաքուի տեսակէտները միջազգային եւ շրջանային հարցերի շուրջ) «Քոմմերսալթ»ին տուած հարցազրոյցում նշել է, որ Խոյամպատի խոստումները օժանդակել Պաքուին լուծելու Լեւոնային Ղարաբաղի խնդրը, մեծ բաւականութիւն են պատճառել ագրպկճանական ղեկավարութեանը։ Պատասխանելով «Հնարաւոր է՞ք համարում, որ Ագրպկճանն ու Փափխտանը միասին պատերազմեն Լեւոնային Ղարաբաղի դէմ» հարցին, Մահմետովը նշել է. «Դեռեւս Ագրպկճանը մտադիր չէ Ղարաբաղի խնդիրը լուծել ռազմական ճանապարհով»։

Նովրուզ Մահմետովը հրաժարուել է այլ հարցերի պատասխանել, սակայն խիստ գարմանք է յայտնել Պաքում Փափխտանի ղեսպանատան տարածած հաղորդագրութեան վերաբերեալ։

Միեւնոյն ժամանակ «Քոմմերսալթ»ի թղթակիցը, ոչ պաշտօնական աղբիւրներից հետաքրքիր տեղեկատուութիւն է ստացել։ Բանն այն է, որ երիտասարդ տարիներին Մուշառաֆը կրթութիւն է ստացել Թուրքիայում եւ տիրապետում է թուրքերէլնին, որը շատ մօտ է ագրպկճաներէլնին։ Եւ որը ագրպկճանական «Էլ.էն Սի.» հեռուստատեսութեան թրդթակիցը թուրքերէլն հարց է տուել Մուշառաֆին՝ փափխտանա-ագրպկճանական ռազմական համագործակցութեան վերաբերեալ, գորավար Մուշառաֆը մամուլ ասուլիսում խափանել է «փրոթոզոլիկանոնները» եւ հարցին պատասխանել թուրքերէլն։

Թղթակիցը գօրավարից փորձել է ճշդղել, թէ ռազմական համագործակցութիւնը յատկապէս ինչպէս կարող է դրսեւորուել։ Հէնց պատասխանի ժամանակ էլ «ռազմական օժանդակութիւն» եւ «դարբադեան հակամարտութիւն» արտայայտութիւնները յարդղել են միմեանց։ Ոչ կատարեալ թուրքերէլնի իմացութեան հետեւեալքով Մուշառաֆի մտքերը աղաւաղուել են։

«Քոմմերսալթ»ը նման մեկնարանութեան իլիւմըրով է վերաբերոււմ, աւելցնցելով, թէ այս ձեւով Ագրպկճանը եւ Փափխտանը փորձում են խուսանաւել միջազգային գալթակցութիւնից։

ԹԱԹՈՒՒԼ ՅԱԿՈՔԵԱՆ
«Ազգ»

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՒՐԶ 50

Յայտսանի տնտեսութեան մէջ կատարուող օտարերկրեայ ուղղակի ներդրումների մակարդակը շարունակոււմ է մնալ չափազանց ցածր։ Վերջին տասը տարում ընդհանուր առմամբ այստեղ ներդրուել է 500 միլիոն տոլար։ Աւելի մ. անցած տարի ուղղակի ներդրումները կրճատուել են շուրջ 50 տոկոսով։ Եթէ 1998 թուականին նրանք կազմել են տարբեր հաշուարկներով 220-240 միլիոն. ապա անցած տարի ընդամենը 123 միլիոն տոլար։

Օտարերկրեայ ուղղակի ներդրումների ամենամեծ հոսքը Յայաստան արձանագրուել է 1998 թուականին։ Ընդհանուր առմամբ այդ մէկ տարուան ընթացքում իրականացուել են այնքան ներդրումներ, որքան մնացած բոլոր տարիներին միասին վերցրած։ Դա հիմնականում պայմանաւորուած է եղել այն հանգամանքով, որ 1998ը համընկաւ մի շրջանի հետ, երբ միջազգային աճուրդով մասնաւորեցուեցին այնպիսի խոշոր հաստատութիւններ, ինչպիսիք էին Յայաստանի հեռահաղորդակցութեան համակարգը, մի շարք հիւրանոցային համալիրներ եւ այլ ձեռնարկութիւններ։ Այս հաստատութիւնների մասնաւորեցման գործընթացներում ներառուեցին նաեւ ներդրումային ծրագրերի կատարման մի շարք պարտաւորութիւններ։ Մասնաւորապէս, հեռահաղորդակցութեան ոլորտում 10 տարուան համար նախատեսուեց մօտ 300 միլիոն տոլարի ներդրումներ իրականացնելու ծրագիր։ Ընդ որում, այդ ներդրումների 100 միլիոնն արդէն պիտի իրականացուած լիներ. սակայն աշխատանքները դեռեւս ընթացքում են։

Գաղտնիք չէ, որ ինչպէս ներքին, այնպէս էլ, առաւել եւս, օտարերկրեայ ներդրումների համար կարելու ըշանակութիւն ունի երկրի քաղաքական ու նաեւ տնտեսական կայունութիւնը։ Թերեւս հիմնականում այս հանգամանքով է պայմանաւորուած անցած տարի ներդրումների ծաւակների կրճատումը։ Դրան աւելացաւ նաեւ այն հանգամանքը, որ տարին այնքան էլ աչքի չընկաւ սեփականաշնորհման արդիւններուութեամբ. որը եւս եւկան դեր ունի ներդրումների իրականացման գործում։ Մասնաւորապէս, անցած տարի յաջողուեց մասնաւորեցնել ընդամենը 44 ձեռնարկութեան, որոնց մի մասը թեւ անջաւ ծրագրային սեփականաշնորհում, այնուամենայնիւ, դրանցում ներդրումների տեսակարար կշիռն այնքան էլ մեծ չէր։ Անցած տարի Յայաստանում իրակա-

նացուող ներդրումների վրայ յատկապէս մեծ էր քաղաքական իրավիճակի ազդեցութիւնը։ Մի կողմից խորհրդարանական ընտրութիւնները, միւս կողմից հոկտեմբերեան իրադարձութիւնները ստիպեցին կարողակաւ ներդրողների ձեռնպահ մնալ Յայաստանի տնտեսական դաշուում ներդրում կատարելուց։ Աւելի մ. թէ տնտեսական եւ թէ քաղաքական իրադարձութիւնների հետեւանքով նկատուեց նաեւ ներդրողների եւ ներդրումների արտահոսք ներքին տնտեսական եւ յատկապէս ֆինանսական դաշուից։

Դեռեւս մի ցանի տարի առաջ ընդունւած Յայաստանում ժտարերկրայ ուղղակի ներդրումների մասին օրէնքը արդէն վաղուց հնացած է։ Չնայած արդէն մէկ տարուց աւելի է ինչ տարբեր ատեսուեցումը քննարկումների ընթացքում է նոր օրէնքի նախագիծը, այնուամենայնիւ այն դեռեւս խորհրդարան չի հասել։ Մինչդեռ դրա կարելուութիւնը չափազանց մեծ է, յատկապէս այն առումով, որ գործող օրէնքի շատ դրոյթներ այնպիսի ջեմ համապատասխանում նոր իրավեանակից։ Պատահական չէ, որ կառավարութիւնն էլ իր հիմնական եւ օրէնսդրական խնդիրներից մէկը համարեց այս օրէնքի ընդունումը, որով առաջին անգամ փորձ կ'արուի խրախուսել ոչ միայն արտաքին, այլեւ ներքին ներդրումները բոլորի համար ստեղծելով հաւասար ներդրումային պայմաններ։

Կապուած քաղաքական անկայուն իրավիճակի հետ, այս տարուան սկիզբը եւս չի առանձնանում ներդրումների աշխուժութեամբ։ Եթէ նկատի չունենանք հեռահաղորդակցութեան համակարգում կատարուող ծրագրային ներդրումները, ապա կարելի է ասել Յայաստանում օտարերկրեայ այլ ներդրումներ գրեթէ չեն իրականացուել։ Յարկն է ուշել, որ այս տարին առանձնանում է նաեւ սեփականաշնորհման չափազանց ցածր ընթացքով։ Մինչդեռ դա կարող էր դառնալ ներդրումների մեծացման հիմնական աղբիւրներից մէկը։ Թեւ միջեւ տարեվերջ դեռ բաւական ժամանակ կայ են որոշ արդիւնաբերական ձեռնարկութիւնների մասնաւորեցման շուրջ ներկայումս ընթացող բանակցութիւնները խոստանում են տարուան երկրորդ կէտին որոշակի աշխուժութիւն մտցնել այս բնագաւառում։

ՎԱՍԱԿ ԹԱՐՓՈՅԵԱՆ

«Հայոց Աշխարհ»

1995 ԹՈՒՒՍԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ ԶՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿՐԱԿԵՑԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱՅ

Մի՞նչն է 1995 թուականի Յունիսի 21ի իրադարձութիւնները մեր քաղաքական կեանքում չի եղել մի ղէպ, երբ իշխանութիւնների եւ ժողովրդի միջեւ ծագած տարածայնութիւններն ու դիմակայութիւնը վերածուէր քաղայտը բախման։

Նախկինում ո՛չ համայնավարները՝ իրենց իշխանութիւնը պահպանելու համար եւ ո՛չ էլ ՀՀԾՍ՝ իր քաղաքական հակառակորդներից ազատուելու նպատակով ժողովրդի դէմ քաջայայտօրէն գէճը չէին կիրառել։ Ուստի 1995ի Յունիսի 21ին մեր քաղաքական կեանքում արձանագրուած նախաղէպը ոչ միայն հանդիսացաւ 1995 լույսիսիագեան իսլայտական ընտրութիւնների նախերգանքը, այլև դրա հիմքի վրայ ձեւաորուած քաղաքական նոր վարչակարգի գործելակերպի անբաժանելի տարրը։

Ներկայումս, երբ մեր քաղաքական կեանքում որոշ ուժերի կողմից յամտօրէն շրջանառութեան մէջ է դրուում բուճապետութեան վտանգի գաղափարը, ամմիչապէս ուշադրութիւն է գրաւում այն փաստը, որ 1995 թուականի Յունիսի 21ին, երբ Ազատութեան հրապարակում կրակում էին անգէն ու անպաշտպան ցուցարարներին ցրելու համար, այդ նոյն ուժերը կամ կրակողների կողքին էին, կամ չեղծ դիտորդի դեր էին ստանձնել։ Ի՞նչն էր նրանց խանգարում խօսելն է պաշտպանել ճշմարտութիւնը եւ ի՞նչն է այժմ ստիպում կատարել այնպիսի կանխատեսումներ, որոնց համար չկան լուրջ հիմքեր ու նախադրեալներ։

Իսկ այն ժամանակ տեղի էր ունեցել աղաղակող անարդարութիւն՝ կենտրոնական Ընտրական Յանձնախումբը, որի ղեկավարներից մէկը ներկայիս գինւորական դատախազ Գագիկ Ջիւանգիրեանն էր, չէր գրանցել ընտրութիւններին մասնակցելու համար յայտ ներկայացրած հիմնական ընդդիմադիր ուժի - Ազգային Դաշինք - Դաշնակցութիւն՝ միաուրման փաստաթղթերը։ Փաստօրէն դրանով ՀՀՇԻ շուրջը համախմբուած -Հանրապետութիւն՝ միաուորումը մնացել էր առանց լուրջ մրցակցի եւ պարզ էր, որ ժողովրդավարական ընտրութիւններ որպէս այդպիսին չեն լինելու։ Ի՞նչ էր մնում անել ընդդիմութեանը քաղաքակիրթ երկրներում ընդունուած հանրայայտ կանոնների շըրջանակում՝ ժողովրդին հանել փողոցները, բողոքել, պահանջել «Ազգային Դաշինք - Դաշնակցութեան» գրանցուելու։ Եւ ո՞րն էր ժողովրդավարութեան շղարշի տակ թաքնուած իշխանութիւնների խնդիրը՝ ստեղծուած դիմակայութեան խորացումը, ընդդիմութեան չէզոքացումը, երկրի ներսում առկա ճեղքումքի վերածումը անանցանելի վիճի՞, թէ՛ բոլոր ուժերին հաւասար պայմանների ապահովումն ու դրանով իսկ երկրի քաղաքական կեանքն ապակայունացնելու բոլոր փորձերի ձախողումը՝ ում կողմից էլ դրանք ձեռնարկււնին։

Մեզ ազգային փորձերը արժանապատեան են արժանացնելու։ Եւ ո՞րն էր ժողովրդավարութեան շղարշի տակ թաքնուած իշխանութիւնների խնդիրը՝ ստեղծուած դիմակայութեան խորացումը, ընդդիմութեան չէզոքացումը, երկրի ներսում առկա ճեղքումքի վերածումը անանցանելի վիճի՞, թէ՛ բոլոր ուժերին հաւասար պայմանների ապահովումն ու դրանով իսկ երկրի քաղաքական կեանքն ապակայունացնելու բոլոր փորձերի ձախողումը՝ ում կողմից էլ դրանք ձեռնարկււնին։

Մեզ ազգային փորձերը արժանապատեան են արժանացնելու։

ՀԱՍՏԱՆԿ ԿԱՐԵԼԻ Է ԴԱՐՁՆԵԼ ԶԲՕԱԵՐՋՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿԻՐ ԵԹԷ... ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՑԱՆԿԱՆԱՅ

Ամբողջ աշխարհով տարեկան մօտ 600 միլիոն մարդ է ճանապարհորդում, որոնք ծախսում են մօտ 4 թրիլիոն տոլար։ Կան գրօսաշրջական կենտրոններ, երկրներ, որոնք դարձել են դասական գրօսաշրջական երկրներ, սակայն գրօսաշրջիկներն արդէն յոգնել են միշտ միեւնոյն երկրներն այցելելուց, նրանք փնտռում են նոր, առաւել չնչախաբիկ վայրեր։ Ծառերին էլ գերադասուել են միաժամանակ այցելել մի քանի երկիր։ Զարգանում է շրջանային գրօսաշրջութիւնը։ Կը դառնա՞յ արդեօք Անդրկովկասը կամ Հայաստանը գրօսաշրջութեան համար հետաքրքրութիւն ներկայացնող երկիր։ «Հայաստանում կան գրօսաշրջութեան զարգացման իրական հնարաւորութիւններ»։ Սա գրօսաշրջութեան յաւազոյն փորձագէտներից մէկի՝ իրլանտացի Մայքըլ Մաքնայթիի կարծիքն է։ Ըստ նրա, Հայաստանն ունի իւրաքանուկ գրօսաշրջական արտադրանք՝ թանգարան րաջերկրնքի տակ, սակայն դա օգտագործելու ու օգտուելու համար անհրաժեշտ է նաեւ կառավարութեան շահագրգռութիւնն ու նպատակասլաց աշխատանքը։ Մաքնայթիին վերջերս Հայաստանում էր գրօսաշրջութեան զարգացման եօթամսեայ կրթական ծրագիր հիմնելու նպատակով։ Ծրագիրը, որը հովանաւորոււմ է Եւրոմիութեան կողմից, նպատակ ունի ստեղծել Հայաստանում գրօսաշրջութեան զարգացման պայմաններ։ Եօթ ամիսների ընթացքում մօտ 40 մարդ կարող է սովորել գրօսաշրջութեան աշխատանքի հիմունքները։ Ընդ որում ծրագրում կ'ընդգրկուեն ոչ միայն մասնագէտներ, որոնք ուղղակիորէն առնչոււմ են գրօսաշրջութեան, այլեւ՝ կրթութեան, մշակոյթի, աշխատանքի ու ֆինանսների ոլորտի աշխատողներ։

Նշենք, որ Մ. Մաքնայթիին գրօսաշրջութեան ընագաւառում աշխատում է մօտ 25 տարի։

1982-1988 թուականներին եղել է իրլանտայի գրօսաշրջութեան խորհրդի նախագահ, միաժամանակ՝ Եւրոյանձանխմբի գրօսաշրջութեան հարցերով փոխ նախագահ։ 88ից յետոյ նա գրադոււմ է խորհրդատուական գործունէնութեամբ, ղեկավարում է իրլանտայի միջազգային գրօսաշրջութեան զարգացման ընկերութիւնը, որը մինչ այժմ օժանդակել է գրօսաշրջութեան զարգացմանը նախկին խորհրդային երկրներում, այդ թըրքացմանը նախկին խորհրդային երկրներում, այդ թըրքում՝ Վրաստանում, Լեհաստանում, Հունգարիայում, Ուքրաինայում։ «Ինչո՞ւ է յատկապէս իրլանտայեան ընկերութիւնը ստանձնել այդ առաքելութիւնը» հարցին ի կատարասխան պրն. Մաքնայթին տեղեկացրեց, որ իրլանտան, լինելով փոքր ու աղբիւրներով աղքատ երկիր, այսօր գրօսաշրջութեան զարգացման առումով առաջատար դիրքերում է։ Այս երկիրը ամենալաջող օրինակն է, թէ ինչպէս կարող է մի երկիր միայն գրօսաշրը-

Ընտրելով բուճապետութեանը բնորոշ գործելակերպ՝ Հայաստանի իշխանութիւններն առաջին անգամ հէնց 1995ի Յունիսի 21ին փողոց դուրս բերեցին հրացանաոր մարդկանց՝ եւ դարաբաղեան պատերազմի գինում մասնակիցներին ուղղեցին այդ պատերազմն ամարտուելուց լետոյ սովորական քաղաքացի դարձած անգէն մարդկանց եւ անպաշտպան ժողովրդի դէմ։ Երբ նրանց շահերը մեր քաղաքական կեանքում պաշտպանող քաղազամիջոցները ներկայումս անընդհատ թմբկահարում են քաղաքականութեանը հրացանաոր մարդու՝ խառնուելու անըոյատրելիութեան մասին, ամմիչապէս մեր առաջ են գալիս 1995ի Յունիսի 21ը. 1996ի Աեպտեմբերի 25ը եւ ինչէնձում, թէ ո՞վ ծնեց հրացանաուոր մարդուն՝ ու նետեց ասպարէզ։

Էտապայում, երբ 1995ի Յունիսի 5ի -ընտրութիւններով՝ ձեւաորուած համակարգը խժոեց նաեւ նրա ճարտարապետներին, վերջիճներից քչերը միայն հանգուեցալ Լ'դուարդ Լեզորեանի անհ համարձակութիւնումեան մասին, ամմիչապէս մեր առաջ են մի կողմ քաշուելու։ Բայց անան խոստովանութիւնն էլ ուշացած. աւելի շատ ցուցարական ծեսք էր, քան քաղաքական կեցուածք, քանզի հրէշն արդէն ծնուել էր եւ ձեւաորուած մեճատիրութիւնն ինքն էր դառնում սեփական դալեակների գերեզմանափորը։

1995ի Յունիսի 21ի կրակոցները հայկական գովաբանուած ժողովրդավարութեանը հասցուած այն ապտակն էին, որից նա այլեւս չկարողացաւ ուշքի գալ։ Կրանք գալիս էին ապացուցելու ճշմարտութիւնն այն մասին, որ ժողովրդի տուած իշխանութիւնը ժողովրդի դէմ օգտագործելու դէպքում -հրացանաոր մարդիկ՝ ինչ-որ մի փուլում աստիճանաբար գործիքից վերածոււմ են գործօնի եւ վաղ թէ ուշ աննպատակայարմար են համարում իրենց օգտագործողների ներկայութիւնը։ Այդպէս եղաւ ՀՀԾԻ ու նրա պարագլուխների հետ, որոնք 1995ի 21ին եւ 1996ի Աեպտեմբերի 25ին ժողովրդի դէմ հանեցին երկրապահներին, իսկ քիչ ժամանակ անց ստիպաւմ էին նրանց թողնել մի՞նչ այդ ընդդիմութիւնից ատամներով պաշտպանուող իշխանութիւնը։

Ներկայումս, երբ մեր քաղաքական կեանքում նկատելիօրէն սահմանափակուել է հրացանաոր մարդու՝ դերակատարութիւնը, երբ Երկրապահը՝ ստիպւած է վերադառնալ իր բուն առաքելութեան կատարմանը, երբ ստեղծուել են անհրաժեշտ նախադրեալներ քաղաքականութեանը բանակի խառնուելը բացառելու համար, բուճապետութեան կառանգի մասին լիչեցոււմները մնանում են այն անէկոդոսիճ, որը լսելուց լետոյ ծիծաղում են ոչ թէ պատմուածի, այլ պատմողի վրայ։

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

Մեզ ազգային փորձերը արժանապատեան են արժանացնելու։

ՀԱՍՏԱՆԿ ԿԱՐԵԼԻ Է ԴԱՐՁՆԵԼ ԶԲՕԱԵՐՋՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿԻՐ ԵԹԷ... ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՑԱՆԿԱՆԱՅ

Ամբողջ աշխարհով տարեկան մօտ 600 միլիոն մարդ է ճանապարհորդում, որոն

